ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ РЕЦЕНЗИИ

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ. Երկեր, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1992, 448 էջ:

Մկրտիչ Խրիմյանը թողել է հարուստ գրական ժառանգություն. հին հայկական տաղաչափությամբ գրված հայրենասիրական պոեմներ՝ «Հրավիրակ Արարատյան» (Կ. Պոլիս 1850, 1876), «Հրավիրակ երկրին ավետյաց» (Կ. Պոլիս, 1851, էջմիածին 1892), կրոնական պատումներ և աստվածաշնչի ու ավետարանի մեկնություններ՝ «Մարգարիտ արքայության երկնից» (Կ. Պոլիս 1866, 1876, 1877), «Հիսուսի վերջին շաբաթ և խաչի ճառ» (Կ. Պոլիս 1876, 1887, էջմիածին 1894), փիլիսոփայական մտորումներ՝ «Ժամանակ և խորհուրդ յուր» (Կ. Պոլիս 1876), բարոյախոսական գեղարվեստական երկեր՝ «Դրախտի ընտանիք» (Կ. Պոլիս 1878, Թիֆլիս 1892), «Սիրաք և Սամվել» (Կ. Պոլիս 1879, 1887, Թիֆլիս 1893), «Պապիկ և Թոռնիկ» (էջմիածին 1894), բազմաթիվ ամսագրային հոդվածներ ցրված «Արծվի Վասպուրականի» և ժամանակի այլ պարբերականների էջերում, հրապարակախոսական երկեր՝ «Վանգույժ» և «Հայգույժ» (Կ. Պոլիս 1877), բանաստեղծություններ՝ «Վերջալույսի ձայներ» խորհրդանշական վերտառությամբ և այլն, և այլն։ Սակայն այդ ստեղծագործությունները այժմ դարձել են բիբլիոգրաֆիական հազվագյուտ արժեքներ։ Մեզանում, խորհրդային կարգերի գոյության ողջ ընթացքում, չի վերահրատարակվել Խրիմյանի և ոչ մի երկ։ Այդ բացը լրացնելու է գալիս Երևանի համալսարանի հրատարակչությունը, որը ցուցաբերել է խրախուսելի նախաձեռնություն, լույս ընծայելով Մկրտիչ Խրիմյանի ստեղծագործությունների մի փունջ։ «Երկերի» մեջ զետեղված են «Պապիկ և Թոռնիկ», «Սիրաք և Սամվել», «Դրախտի ընտանիք», «Վանգույժ» և «Հայգույժ» ստեղծագործությունները։ «Երկերի» կազմողները և առաջաբանի հեղինակներն են Հ. Պետրոսյանը և Ա. Մագոյանը։

Բովանդակային առումով «Դրախտի ընտանիքը», «Սիրաք ու Սամվելը» և «Պապիկ ու Թոռնիկը» մեկը մյուսի տրամաբանական շարունակություններ են։ Դրանք հայ ժողովրդի մեջ չդրված օրենքների ուժ ստացած բարոյական, իրավաբանական դասեր են, որոնք նպատակամղված են հայ գյուղացուն սովորեցնել ապրել, արարել, հարատևել ժամանակի ոգուն համապատասխան, ժամանակին համընթաց։ Միաժամանակ դրանք հեղինակի հայացքներն են հասարակական կյանքի բազմազան երևույթների նկատմամբ։ Ժամանակագրական առումով առաջինը «Դրախտի ընտանիք» աշխատությունն է։ Նրա մտահղացումը ծագել է դեռևս 1869—1873 թթ. Կ. Պոլսի պատրիարքության տարիներին։ Սեփական աչքով տեսնելով արևմտահայության ընտանեկան կյանքի եղծումների ծանր հետևանքները ազգի հարատևության գործում, Խրիմյանը պատրիարքական շրջաբերականով հանձնարարում էր վերացնել հայ ժողովրդի ավանդույթներին խորթ և անհարիր, օտարամուտ շատ հոռի երևույթներ, որոնք վտանգ էին սպառնում հայ ընտանիքների կազմավորմանը, ազգի բնական աճին։ Հենց այդ մտորումները դարձան այն հիմքը, որի վրա ստեղծվեց «Դրախտի ընտանիքը» «ի պետս հայոց ընտանյաց»։ Աշխատության նախաբանում հեղինակը դիմում է ընթերցողներին. «Ժամ հասավ, խոստովանիմ քեզ, ո՜վ ազգ հայոց, չորս տարվան պատրիարքությանս շրջանին մեջ քո ընտանեկան բազմապատիկ աղետները ես ինքնին տեսա և այդ աղետներուն մեջ առավել աղետավոր էին ամուսնական խնդիրները»։

Աստվածաշնչից, ավետարանից բերված օրինակներով, պարզ ու հստակ, ժողովրդին հասկանալի և ախորժալուր պատմելաձևով աշխատության 18 մասերում Խրիմյանը քննարկում է ընտանիքի, ամուսնության, նրան ուղեկցող «խափանարար զեղծումների», ամուսնական զույգերի՝ ամուսնու և կնոջ հարաբերությունների, իրավունքների և պարտականությունների, մոր՝ իբրև ապագա սերունդի առաջին դաստիարակի, զավակների՝ ծնողների նկատմամբ ունեցած պարտականությունների և այլ հարակից հարցեր ու խնդիրներ։ Խրիմյանը ընտանիքը համարում է հասարա-

կական կյանքի հիմքերի հիմքը. «Մեր ընկերական աշխարհին բովանդակ շենքը ամուսնական և ընտանեկան պատվանդանին վրա հաստատված է, ժողովրդոց ոտքը և պետության դահերը նորա վրա դրված են. եթե քանդվի այս պատվանդանը՝ ժողովուրդ և գահերը ի միասին կը տապալին»։ Խրիմյանը բացառում է բռնության գոյությունը հայ ընտանիքում, նա սովորեցնում է իր զավակներին՝ հայ երիտասարդներին, որ պետության ամենափոքր բջիջը համարվող ընտանիքում հայրըն ու մայրը պետք է ունենան հավասար իրավունքներ և պարտականություններ։ Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել իգական սեռի դաստիարակության վրա, քանի որ մայրն է զավակների առաջին դաստիարակը։ Ամուսնական կապերը պետք է ստեղծվեն կամավոր սկզբունքներով. բացառվում է ծնողների կողմից բռնությունը երիտասարդների կամքի վրա։ Այն ժամանակվա հայ ընտանիքի վերաբերյալ Խրիմյանի այս հայացքները խիստ անհրաժեշտ և օգտակար էին։

«Սիրաք ու Սամվելը», կարծես թե «Դրախտի ընտանիքի» տրամաբանական շարունակությունն է։ Այդ գործը հեղինակը համարում էր «բարի հոր կրթական դասերը ի նվեր հայոց հարց և դարդացյալ որդվոց»։ Իր տարեկիցներին և երիտասարդներին Խրիմյանը ուսուցանում է մարդկային հասարակության մեջ տիրող օրենքները։ Այդ մտորումներում արտացոլված է Խրիմյանի ժողովրդասեր ոգին, նրա աշխարհընկալումը։ Ջրնդունելով դուեհիկ հավասարության գաղափարը, Խրիմյանը միևնույն ժամանակ իր ըմբոստությունն է արտահայտում սոցիալական անարդարությունների, մարդու կողմից մարդու շահագործման նկատմամբ։ Այդ հարաբերությունների կարգավորող մարմինը համարելով պետական կառույցները, Խրիմյանը քննարկում է իշխանության և հպատակ ժողովրդի հարաբերության հարցերը, գծում նրանց իրավունքների և պարտականությունների սահմանները։ Փիլիսոփա Խրիմյանը լավ գիտեր, որ պետությունը և իշխանությունը պատմական կատեգորիաներ են և առաջացել են մարդկային հասարակության զարգացման որոշակի փուլում։ Նա մտորում է, որ դուցե քաղաքակրթության զարգացման որոշակի փուլում մարդը հասներ «ծայրագույն կատարելության, սուրբ ու իշխանությունը բարձվեր աշխարհես»։ Սակայն իրատես Խրիմյանը դա համարում է «ազատասեր մարդու երևակայության երազ»։ Իշխանության գոյությունը անհրաժեշտ համարելով մարդկային հարաբերությունների կարգավորման գործում, հեղինակը առավել ընդգծում է նրա անհրաժեշտությունը հասարակապետական կարգերում, որպեսզի ժողովուրդը ամբոխ չդառնա և չտիրի անարխիան։ Խրիմյանը պետության պարտքն էր համարում հըսկել «հանապազ հոգով ժողովրդի բարօրության, բարգավաճման և հառաջադիմության համար»։ Նա արտահայտում է այսօրվան համահունչ մտքեր և պահանջներ իշխանության վերաբերյալ, նրա հզորությունը պայմանավորելով արդար և հավասար օրենքով։ Իշխանության ամենամեծ պարտականությունը այդ օրենքի անաչառ գործադրությունն է, որը չպետք է թույլատրի, «որ զորավորներ հեստեն օրենքին դեմը և նոքա, որ կարգյալ են օրենք պաշտպանելու՝ նոքա դեղծանին օրինաց մեջ և առ ոչինչ համարեն զայն»։ Հեղինակը իրավացիորեն գտնում է, որ այն հասարակությունը, ուր «ուսումն ատեցին, հանճարն անպատվեցին, գրասերն անոթի մեռավ, արվեստավորն առանց քաջալերության մնաց» դատապարտված է «անշարժ դիակ» դառնալու։

Քննարկման հարցերի բազմազանության, բարձրացած պրոբլեմների յուրահատուկ լուծման տեսակետից, նաև գեղարվեստական արժանիքներով ամենահետաքրքիրը Խրիմյանի «Պապիկ ու թոռնիկ» աշխատությունն է, որը գրվեց Երուսաղեմի Ս. Հակոբա վանքում 1890—1892 թթ.։ Գյուղական ժողովրդի թոռնիկներին պատգամ հղված այս գործը ավարտվեց և լույս ընծայվեց Էջմիածնում արդեն կաթողիկոս օծված Հայրիկի կողմից։ «Առ շինական ժողովուրդս հայոց» խորագիրը կրող նախաբանը բացատրում է ընթերցողին աշխատության ստեղծման դրդապատճառները։ Մի անանց կարոտի մորմոք հեռավոր Հայաստանի, հայրենի Վասպուրականի նկատմամբ. այն բանի գիտակցումը, որ իրեն այլևս չի հաջողվելու այցելել Վարագա իր արծվաբույնը, ստիպում են կաթողիկոսին զրույցի նստել շինական ժողովրդի հետ և իբրև պապիկ վերջին դասը ավանդել իր թոռնիկներին։ Իսկ այդ դասերը շատ անհրաժեշտ գյուղատնտեսական գիտելիքներ են երկրագործության տարբեր մանրամասների՝ հողը մշակելու, վարուցանի, սերմի ընտրության, նորագույն տեխնիկայի օգտագործման մասին։ Նախնադարյան խոփ ու արորով երկրագործությունը վարող հայ գյուղացուն նա սովորեցնում է օգտվել գութանից՝ այն ժամանակվա գյուղատնտեսական նորագույն տեխնիկայից։ Հայտնի է, որ դեռևս Վարագա վանահայրության տարիներին նա Եվրոպայից բերել էր տալիս գութան և ինքը անձամբ ղեկավարում Վասպուրականի գյուղա-

ցիության՝ նրանից օգտվելու աշխատանքները։ Իսկ 1880-ական թթ. սկզբին նա Վարագում բացում է երկրագործական վարժարան, ուր դասավանդում էր Գերմանիայում ուսանած Ն. Մագաթյանը։ Ահա այդ փորձերը Խրիմյանը հետագայում անփոփում է իր թոռնիկներին տրվող դասերի մեջ։ Աշխատության գլուխների խորագրերը մատնանշում են հեղինակին հուզող հարցերի բազմազանությունը։ Աշխատությունը համեմված է ժողովրդական բառ ու բանով, տշխույժ պատմելաձևով, որոնք արտաքինից անհետաքրքիր թվացող նյութին հաղորդում են մեծ հետաքրքրություն։ Հուզիչ և արդիական է պապիկի կտակը իր թոռնիկներին՝ բոլոր եկող սերունդներին ուղղված նրա պատգամը՝ հավետ կապված մնալ մայր հողին, չքել այն, չհեռանալ օտար երկրներ։ Պապիկը թոռնիկին ժառանգություն է թողնում ամենաանփոփոխն ու հաստատունը՝ հայրենի դաշտերն ու հողերը, կտակում անխախտ պահել նահապետական հայկական ընտանիքի պատկառանքն ու պարկեշտությունը, տոհմական առաքինությունը, ակնածությամբ պատվել ծնող մորը, սիրով ու գորովանքով լինել կնոջ հետ, ունենալ բազմաթիվ երեխաներ և մտածել նրանց հոգեկան լույսի՝ կրթության մասին։ Կյանքի «անխոտոր ուղիղ ճանապարհը» անցնելու համար անհրաժեշտ է «մտավորական լույս» որ է «ուսումն և կրթությունն»։ Շարունակելով «Դրախտի ընտանիքի» մտքերը կանանց կրթության մասին, Խրիմյանը մտորում է. ինչպես կարող է մայրը կրթել իր զավակներին, երբ ինքը «անկիրթ ու տգետ է»։

«Երկերում» տեղ են գտել «Վանգույժ» և «Հայգույժ» շատ կարևոր աշխատությունները։ 1876-ի դեկտեմբերի 26-ի գիշերը թուրքական զորքերը նախօրոք մշակված պլանով հրդեհեցին Վանի վաճառաշահ շուկան։ Հրի ճարակ դարձան հայերին պատկանող 500 խանութ, մեծ հարվածի ենթարկվեց քաղաքի հայության տնտեսությունը։ Նման միջոցներով Բ. Դուրը ցանկանում էր թուլացնել Վասպուրականի հայությանը, դիմակայել նրանց ազատասիրական ոգուն։ Հայրենի քաղաքի ավերումը զայրույթով լցրեց Պոլսում գտնվող Խրիմյանի հոգին։ Հրաբուխի նման ժայթքեց «Վանգույժը», որը լույս տեսավ 1877-ի հունվարի վերջին և չնայած կառավարության դրած արգելքին, արագորեն տարածվեց հայկական կենտրոններում։ Միդհատյան սահմանադրության հռչակած «ազատություն, եղբայրություն, հավասարություն» սկզբունքներից հուսախաբ Խրիմյանը դիմում է կառավարությանը, մահմեդական պետերին, բողոքում անմարդկային արարքների համար։ Փիլիսոփայի նրա լայնախոհ հոգին կասկածում է, թե նման տմարդի արարքները բխում են իսլամական դոգմաներից, նրանց սուրբ գրքից. «Ով Գուրան, Գուրան, ես չեմ հավատար այնպես, ինչպես կհավատան ոմանք քո դպիրներին, թե դու քեզ հավատացող որդիքներուն տիրապես հրաման կուտաս, որ ավետարանի աղքատ որդիներուն ձեռքեն հացը հափշտակեն, ստրուկ ճանչնան, կյանքեն զրկեն, եթե մեռցնեն՝ այդ ևս զոհ և արդարություն համարին, միով բանիվ միշտ բռնավորության գավազանով շախշախեն զիրենք»։ Գույժը, սակայն, միայն ողբ չէր, այլ նաև պայքարի կոչ և հրավեր։ Դիմելով իր հայրենակիցներին, Խրիմյանը մեղադրում է նրանց՝ անմռունչ և հնազանդ լինելու, իր մարդկային արժանապատվությունը բարձր չըպահելու համար։ Ամեն ինչ սահման ունի, երբ դանակը ոսկորին է հասնում, պետք է ոտքի ցատկել։ Եթե իշխանությունը և օրենքը չի պահպանում իր հպատակների կյանքը, ժողովուրդը պետք է դիմի ինքնապաշտպանության. «Դու գիտես, ով հավատարիմ ժողովուրդ հայոց, մարդիկ և ազգեր կան, որ քո այնչափ հավատարմությունը կծաղրեն ու կմեղադրեն զքեզ, երբ կտեսնան որ խիստ անմռունչ և անզգա կլինիս հավատարմությանդ մեջ, մինչև անշունչ անբարբառ դիակ մը կը դառնաս դու, այնպես որ պարկեշտությունդ կը նշավակեն և կոխկրտելով կանցնին վերայեդ և դու չես իմանար։ Միթե գեհենաց կավ ես դու աշխարհիս երես, ես ել կը դատիմ զքեզ, թե այդչափ ստրկանաս և աղարտես մարդկության ազատ պատիվ»։ Գույժը վերջանում է հայրենի երկիրը վերաշինելու կոչերով։

«Երկերում» զետեղված վերջին ստեղծագործությունը «Հայգույժն» է։ Այն գրվեց 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին, երբ օգտվելով պատերազմական իրադրությունից, թուրքական կանոնավոր զորքերը քրդական խաժամուժի մասնակցությամբ սրի քաշեցին Բագրեվանդի և Ալաշկերտի հովտի հայությանը։ Օգտագործելով մեծ քերթողահայր Խորենացու հայտնի ողբի ձևը, նշելով որ հայոց պատմությունը լի է ողբերով, Խրիմյանը ցանկանում է լինել վերջին ողբերգուն, որ հայոց «անպահապան այգին ճառաղ չլինի, որ հավերժ վերանան հայոց տառապանքները և լռեն ողբերը։ Բայց ողբի հետ միասին Խրիմյանը ուժ ու կորով, հույս ու հավատ է ներշնչում, բորբոքում է ազատության հուրը, կոչ անում ողջ հայությանը Բագրեվանդի բնակիչների նման «մատաղացու գառ» չդառնալ,

ձևոք բերել ցուլի «խեթկիչ եղջյուրներ»։ Զարին չարով չհակառակվելու քրիստոնեական քարոզի փոխարեն Խրիմյանի գրչի տակից հորդում են մարդկային արժանապատվություններ բարձր պահելու, դիմագրավելու, պայքարի կոչեր. «Ով հայոց ողջ ու մնացորդ որդիներ, դեռ պիտի կոտորվիք, դեռ պիտի մորթվիք..., քանի որ անգեն, անեղջյուր անասպար կապրիք, դուք մարդ եք, ձևոք ու բազուկ ունիք, միթե անզգացած մեռեր է ձեր սրտմտության ոգին»։ Հեղինակը իրրև անհրաժեշտ դաս ուսուցանում է իր զավակներին՝ հայ երիտասարդությանը, որ «ցանկալի ազատություն առանց զոհի և արյան» չեն ստանում։ Հետևապես ազգը պետք է միարանվի, ինքն իր մեջ որոնի իր փրկության ուղիները, դիմի ինքնապաշտպանության։ Պատերազմի ավարտից և Բերլինի կոնգրեսից հետո այս երկու «դուլժերին» պայքարի կոչերը հստակ ձևավորվեցին «երկաթե շերեփի» մտայնությամբ։ Եվ պատահական չէ, որ 1880-ականների կոչերից հետո և զործելու ժամանակը, ազատագրական նպատակներ հետապնդող գաղտնի կազմակերպությունները, որ ստեղծվեցին Վասպուրականում և Տարոնում, ներշնչվում էին Խրիմյանի զաղափարներով։

Հաջող է գրված «Երկերի» առաջաբանը, ընդհանուր առմամբ ճիշտ է լուսաբանված Խրիմյանի գործունեությունը։ Սակայն մի կարևոր գիտողություն։ Առաջաբանի հեղինակները գրում են. «Խրիմյանի գործունեության առաջին շրջանը կապված էր գլխավորապես Թուրքիայի ավազակապետության հետ, ապա նրա կյանքի վերջին տարիները խռովեցին ցարական կառավարության հակամարգկային գործողություններ»։ Ավելին, նրանք խոսում են հայ ժողովրդի՝ «Սկիլայի ու Քարիբդայի միջև» ապրելու ճակատագրական հանգամանքի մասին։ Մեզ թվում է, ճիշտ չէ նման ձևով հավասարության նշան դնել ցարական կառավարության և թուրքական բռնապետության միջև։ Խրիմյանն իր ողջ գործունեության ընթացքում պայքարել է թուրքական բռնապետության դեմ։ Դրա հավաստումներն են «Արծվի Վասպուրականի» էջերում սփռված նրա բազմաթիվ հոդվածները, հենց այս երկերում տեղ գտած «Վանգույժեր» ու «Հայգույժեր»։ Չենք կարող չնշել, որ 1890-ին սուլթանական կառավարությունը «ուխտիր» պատրվակի տակ Խրիմյանին աքսորեց Երուսաղեմ, որովհետև նրա ներկայությունը իր մայրաքաղաքում և Արևմտյան Հայաստանի տարածքում անցանկալի էր համարում՝ նրան վերագրելով խռովություններ հրահրողի դեր։ Իսկ դրանից առաջ, 1880-ին Վասպուրականի հոգևոր առաջնորդ Խրիմյանը հատուկ նամակով դիմում է ռուսական ցար Ալեքսանդր II-ին, նրան խնդրելով սատար կանգնել արևմտահայությանը, որովհետև թուրքական կառավարությունը «արդարություն և հավասարություն գործադրելու համոզում և կամք չունի» և արևմտահայությանը «ի մոտո չնչել կսպառնա» (ՌԱՔԱ, ֆ. Դեսպանությունը Կ. Պոլսում, գ. 1568, թ. 10—11)։ Կասակցությունը չէ, որ հետագայում, 1895—96 թթ., երբ սուլթանական կառավարությունը սանձազերծեց հայկական կոտորածներ [illegible] Թուրքիայի հայաբնակ վայրերում, կաթողիկոս Խրիմյանը դարձյալ դիմեց ռուսական ցարին, խնդրելով նրա միջամտությունը հայկական բարենորոգումների իրագործման հարցում, իսկ Թուրքիայի ռուսական դեսպան Նելիդովը առաջիններ էր մեծ տերությունների ներկայացուցիչների մեջ, որ իր զժգոհությունը հայտնեց այդ կոտորածների առիթով։ Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում վերջերս հայտնաբերված Խրիմյանի դիմումներն ու նամակները կրկին անդամ հավաստում են նրա ռուսական կողմնորոշումը։ Ճիշտ չէ հավասարության նշան դնել ցարիզմի և սուլթանիզմի միջև, թեկուզ հենց այն պատճառով, որ Ռուսաստանում երբեք չի վտանգվել հայության ֆիզիկական զոյությունը. ընդհակառակը, ստեղծվել են պայմաններ նրա սեի և զարգացման համար։ Նման ձևով գրելը նշանակում է տուրք տալ պատեհապաշտությանը կամ մտածել հին ստերեոտիպով՝ ցարիզմ և սուլթանիզմ հասկացությունների նույնացում բոլշևիկյան մտածելակերպով։

Է. Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ